

Երեւոյն



10

(193)
Հոկտեմբեր, 2022



ԼԻՆԵԼ ԱՆԿԵՂԾ ՈՒ ՃԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՊՐԵ՛Լ...

«...Չէի ուզում ասել, որովհետև պատվիրված է գաղտնիք պահել... բայց հույս ունեմ՝ ձեր մեջը կմնա, ու ոչ ոքի չէք ասի: Չեկան անցյալ գիշեր ինձ կանչեց և առաջարկեց «անկեղծ աշխատել» իր ցամաքում: Հասկացա՞ք՝ ինչ է նշանակում: Այս կարգերում անկեղծություն: Լինել անկեղծ ու շարունակել ապրել: Երբ մեռնողն անգամ կվախենա անկեղծ լինելուց: Նա պետք է բավական փտած լինի գերեզմանում, որ սիրտ անի անկեղծության»:

Ցանկանում եմ, որ սկսված լինի անկեղծության մասին խոսակցությունները: Եվ յուրաքանչյուր հաջորդ անգամ համոզմունքն այն ճշմարտության մեջ, թե բոլոր օրագրերը մի-մի հատորյակներ են, մեծանում է: Գիծը՝ քաղաքական. չէ՞ որ Լեռ Կասսարի ստեղծագործությունների հենքը քաղաքական աստիճան է՝ հազեցած անվերապահորեն՝ հրապարակախոսի ճարտասանական վարպետությամբ: Իսկ այդ ամենը գրականության մեջ պետք է արտահայտվեր իրական գրականության իսկ ներկայացմամբ: Ուրեմն՝ ուրույն ասելիքը՝ գրականության (գեղարվեստականության) ընդգծված: Գրողը նաև իրականության մեջ է ներկայանում իր պարագայում սարսափելի ապրումներով, որտեղ հաստատուն իրենց տեղերն են ապահովել հույզերը, զգացողություններն ու, ինչո՞ւ ոչ, գրողի զգացմունքները սիրտ օբյեկտի սկայալ մինչև դրկից ու խանութների առջև գոյացող անվերջ-անձի հերթեր, որոնք անխոս կարող են հասնել մինչև... «հարևան երկրի սահմանը»: Եվ բանավերջ երկուս հաստատուն ու անփոփոխ է մնում. անբակտերի, նույնիսկ չզգացվող կապը, սահմանային գիծը օրվա քաղաքական և սոցիալական, անգամ կենցաղային տրամաբանորեն ու օրինաչափորեն գոյություն ունեցող իրադարձությունների: Մի պահ թվում է, թե այս երեքը չեն կարող ամբողջանալ տրամաբանության մեկ շերտ-տիրություն, սակայն իրականությունը, կոնկրետ այս դեպքում՝ օրագրերի ժողովածուն, գալիս է իբրև փաստացի ապացույց:

Սրբաբանության համար: Տարիների ընթացքում չարչրված Լեռ Կասսար-Արամ Թովմասյան (Թովմասյան) ազգանվան պատմությունը այստեղ է «գաղտնագրվում»: Ներկայացվող նյութը պետք է ընդունել որպես փաստացի ապացույց գրողի կենսագրության այս հատվածի, որպես ինքնակենսագրության մի պատահիլ: Մի առիթով ներկայացնելով անձնական-գրողական տաղանդավոր, բայց շնչասպառ ու իրավազուրկ վիճակը Լեռ Կասսարը գրում է. «Ուղիղ տասներեք տարի է՝ սովետական կառավարությունն զրիչս պինդ բռնել, չի թողնում, որ շարժեն: Մի տասն անգամ կա՞ դիմել են, թե մի խանգարեր, ձեռներդ դեն տար, գրեմ, չէ՞, ասում է... -Հրաշալի հողված է, - ասում է,- բայց ափսոս որ մի քիչ... վատն է»:

Պատկերավոր, աննկարագրելի հյութեղ, հազեցած ու բազմազան ուղորտներին վերաբերող ասելիքով. մի բան, որն արդեն զարմանալի չէ երգիծաբանի ձեռագրին ծանոթ լինելու պարագայում, անգամ այնքան սրտամոտ ու հարազատ է բառապաշարային շերտով, որ թվում է՝ ուր որ է՝ ընթերցողն ինքն կբացի տողատակը, և կամ թե շարունակությունը կհնչի արդեն ոչ թե հեղինակի, այլ նրա արվեստի երկրպագուների բերանից: Այս էլ որբերող անգամ համոզվում ենք՝ երգիծաբանի տողերը ինչ-որ չափով կըճատ մեջբերելը պատկերավոր ասած կարող է հավասարազոր լինել նրա գրչի առջև մեղանչելու: Մի րոտեղ է գրողի ստեղծագործությանը վերաբերող ցանկացած խոսքում մեջբերումների առատության բացատրությունը: Եվ քանի որ այստեղ խոսքը գնում է ժամանակի գրականության մասին, անշուշտ պետք է շոշափել նաև այդ ժամանակի գրականության զարկերակը մեծ առումով՝ առավել պարզորոշ ընդգծելու գրողի գործերի վերաբերյալ ժամանակի քննադատական-ժխտողական սուր վերաբերմունքը: Սկզբի համար միայն հիշենք, թե ինչպիսին էին ժամանակները, և փաստացի ովքեր կարող էին առավել հաջողակ լինել թե՛ կյանքում, թե՛ նաև գրական ասպարեզում:

Մտնողներից հետո վերջապես հեղինակը գալիս է եզրահանգման. ի՞նչ կա որ. կարելի է և փորձել. «Ծիշտ է ասում կինս. իմ գրած ճշմարտությունները ո՛չ կերակուր կուտան երախաներիս, ո՛չ էլ կարկատան կոնեն նրանց ծակ վարտիքներին: Արի՛, փորձեմ ես էլ սուտ գրել: Նախ սկսել փոքրիկ ստից, հետո գնալով մեծացնել և ապագային դառնալ հռչակավոր սուտասան: Այս հաստատ որոշումով գրիչը վերցնում եմ ձեռքս: Բայց ո՞վ զարմանք. մտքիս մեջ հղացած բոլոր ստերը ձեռքս շուռ է տալիս ճշմարտության և այնպես գրում: Քառասուն տարի ճշմարտության սովորած ձեռքս չի կարողանում ստել: Հանկարծ մի ուրախալի միտք եմ հղանում: Ե՛կ, ասում եմ, ձախ ձեռքիս վարժեցնեմ սուտ գրել, աջով ճշմարտություն գրեմ ապագայի համար, իսկ ներկայի համար ձախ ձեռքի ստերը գործածեն»: Մեկ փաստացի ապացույց ևս, որ անգամ մտովի նա չի կարողանում գրիչը «սուտ» շարժել՝ հետագա բոլոր «դրական» ու «ապրեցնող» հետևանքները գիտակցելով հանդերձ:

Երբ տարիների հունձքը այսօր և արդեն ընդմիջտ՝ հավերժորեն արդիական է դառնում, թվում է՝ նույն ժամանակի մեջ ներհյուսվել են անցյալը, ներկան ու ապագան, իսկ հյուսածոն կրկին միայն հավերժին է: Երբ արդեն կես դարը բոլորած մեկ միտքը զարմանալիորեն այսօրվա մասին է, հյուսածոն բյուրեղացած է հիսուն և ավելի տարիների բովում, իսկ գրողը, կրելով պատմության, ժամանակի իրականության և հավերժի բանալիները միաժամանակ, գալիս է այս էլ որբերող անգամ ապացուցելու՝ դարձ է ծնունդ անհատին, տաղանդն «ստիպում է» խոսել բոլոր ժամանակների մեջ՝ հետայսու...

Նրա գրական ծնունդը սկիզբը եղավ հայ գրականության բոլորովին տարբերվող մի շքի, որովհետև նրա ձեռագիրը տողի համապարփակ կարգավորումն է՝ միայն մեծին բնորոշ...

Սրբաբանության համար: Մի քանի օր էլ գրողը որոշում է տուրք տալ կնոջ բազմաթիվ այն պնդումներին, թե կարելի է և ուրիշների նման ստեր գրել ու ապրել այնպես, ինչպես մյուս բոլորը: Երկարատև

Իսկ հաջորդ տողերում ստեղծում է հստակ հակադրությունը հին գրականության և խորհրդային գրականության միջև. «Տե՛ս, ուրեմն, խորհրդային գրականությունն որքա՞ն տարբեր բան էր կգործածի, մինչդեռ հին գրականությունն միայն գեղարվեստին է ծառայում: Այդպես է, երբ գնացք իր ռելսերից դուրս գա, էլ խտրություն չի դնի. որտեղ ասես կմտնի»:

Սրան հետևում է գրողի՛ այդ օրվա մարդու վիճակի «բանավերջ» նկարագրությունը. «Նստակյաց կամ ընտանի մարդու և վայրենու տարբերությունը գիտե՞ք ինչն է, այն է, որ ընտանին գիտե, թե վաղվա հացով ապահովված է, իսկ վայրենին ոչ: Այս առումով սովետական ողջ ժողովուրդն վայրենի է...»:

Օրագրային ժողովածուներից մեկն է դանդաղորեն՝ տարվա բոլոր 366 օրերում նա ամփոփում է 1948-ը՝ իր չարքաշ կյանքում գուցե թե հերթականը՝ լի նախորդ և հաջորդող բոլոր տարիներին զգացածով՝ առավել տառապանքով, ավելի շնչահեղծությամբ, գրչի ու մտքի անազատությամբ պայմանավորված՝ հեղձուկով, բայց ընթերցողի ու պատմության համար սա արդեն մի նոր փուլ է՝ գրողի՛ պատմական դեպքերի ու իրադարձությունների՝ ծայրահեղ

«Եթե չլինեիս աշխարհում մարդկային զանազանատեսակ իդեալներ, սկզբունքներ ու աշխարհայացքներ, ծաղր գոյություն չէր ունենա: Նախամարդու և կենդանու մոտ ծաղր գոյություն չունի, որովհետև իդեալ գոյություն չունի»:

Այսպես ահա. մի օր էլ գրողը որոշում է տուրք տալ կնոջ բազմաթիվ այն պնդումներին, թե կարելի է և ուրիշների նման ստեր գրել ու ապրել այնպես, ինչպես մյուս բոլորը: Երկարատև

Սրան հետևում է գրողի սատիրայի բարձրակետ. «Մեթոդն երևելի է, խոսք չուզեր, միայն վախս այն է, ասում եմ՝ չլինի՞ բոլոր թշվառությունն ավտոյի վրա բարձելուց հետո... հանկարծ երկրում բնակչություն չմնա...»:

Չուզահեռ հարթություններ, որոնք միմյանց բնավ չեն խանգարում, ճիշտ հակառակը՝ միայն փոխլրացնում են իրար՝ ընդգրկուն տեղեկություններով՝ հարստացնելով թե՛ ժամանակի պատկերը, թե՛ կամսարյան գրականության ուրույն էջերը:


Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

«...Չէի ուզում ասել, որովհետև պատվիրված է գաղտնիք պահել...»

«Մեթոդն երևելի է, խոսք չուզեր, միայն վախս այն է, ասում եմ՝ չլինի՞ բոլոր թշվառությունն ավտոյի վրա բարձելուց հետո...»

«Մեթոդն երևելի է, խոսք չուզեր, միայն վախս այն է, ասում եմ՝ չլինի՞ բոլոր թշվառությունն ավտոյի վրա բարձելուց հետո...»

«Մեթոդն երևելի է, խոսք չուզեր, միայն վախս այն է, ասում եմ՝ չլինի՞ բոլոր թշվառությունն ավտոյի վրա բարձելուց հետո...»



ՇԻՐԱԿԻ ԳԱՏՄԱՆԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

նագործուն մասնակցությամբ, այն նաև Գյումրու մտավորականության կյանքում սպասվող կարևոր իրադարձություն է, որի շնորհիվ Գյումրին արվեստների ու արհեստների, ազգային երգ-երաժշտության ու սպորտի քաղաքը, այսօր նաև գիտության քաղաքի ազնիվ անունն է կրում:

«Մեր նախորդ հանդիպումից անցել է երեք տարի... իր ողջույնի խոսքում նշեց հայագիտական կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյանը, այս ընթացքում աշխարհում շատ բան է փոխվել: Անփոփոխ է մնացել թերևս մեր կամքը՝ երեք տարին մեկ հավաքվել Գյումրիում, քննարկելու համար Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության արդի վիճակը, ուրվագծելու հայագիտության ընդհանուր համատեքստում գավառի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետագա ընթացքն ու առաջնահերթությունները»:

Միջազգային գիտաժողովի հարյուրավոր մասնակիցները իրենց խոնարհումը բերեցին աղբյուրանական վերջին ազդեցիկ արդյունքում զոհված հայորդիների հիշատակին, ապա մասնակիցներին ողջունեցին ու գիտաժողովին հաջող ընթացք ու արդյունավետություն մաղթե-

ցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը, ՀՀ Շիրակի մարզպետ Ն. Բաղդասարյանը, Գյումրու քաղաքապետի գլխավոր խորհրդական Հ. Սուլթանյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ա. Ասատրյանը, Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի ռեկտոր Ս. Բերիծեն, ՀՀ-ում Ռոսստրոլոնիչեստվոյի ներկայացուցչության ղեկավարի տեղակալ Ա. Բերյանը, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրեն Հ. Հարությունյանը և այլք:

Շիրակը հոգևոր և նյութական մշակույթի անսպառ գանձեր ունի՝ հնագիտական ու պատմական մեծարժեք հուշարձաններ, անկրկնելի բանահյուսություն, անգուգական կենցաղ, դարերի խորքից եկող ավանդույթներ, զարմանահրաշ ճարտարապետություն, բազմազան արհեստներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն: Այլ խոսքով՝ պատմամշակութային հսկայական ժառանգություն, որի ուսումնասիրության վերջին քառորդ դարն անխափառ կապված է ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ: 25 տարի առաջ Գյումրիում սկիզբ առավ պատմությունը մեր երկրում առաջուր միակ ակադեմիական ոչմայրաքաղաքային հայագիտական կառույցի:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին ԳԱԱ հայագիտության և ՀՀ բաժանմունքի ղեկավար ակադեմիկոս Յու. Սուվարյանը կարևորեց ՇՊՄԺ նշանակությունը հայագիտության զարգացման բնագավառում, մարզպետ Ն. Բաղդասարյանի խոսքում առանձնակի կարևորվեց մարզում երիտասարդ հա-

յագետների պատրաստման գործում այսպիսի գիտական միջոցառումների և նրա կազմակերպչի՝ Շիրակի ակադեմիական կենտրոնի դերը: Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի ռեկտոր Ս. Բերիծեն ընդգծեց իրենց բուհում Շիրակի կենտրոնի գիտնականների դասատվության կարևոր նշանակությունը և նրա լավագույն շրջանավարտներին կենտրոնի հետ կապելու անհրաժեշտությունը:

Անդրանիկ լիագումար նիստում մեծ ուշադրությամբ լսվեցին բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դ. Գասպարյանի «Չարենցն ու պատմականությունը», Գ. Աղայանի «Ալեքսանդրապոլի քաղաքային համայնքը 1890-1910-ական թվականներին», արվ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ասատրյանի «Գ. Լևոյանը և երաժշտության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում» գեկուցումները: Գիտական արդյունավետ աշխատանքի համար կենտրոնի մի շարք գիտաշխատողներ արժանացան ՀՀ ԳԱԱ նախագահության, Շիրակի մարզպետարանի ու Գյումրու քաղաքապետարանի պարգևների:

Կենտրոնի աշխատակազմի և գիտաժողովի մասնակիցների անունից տնօրեն Ա. Հայրապետյանը խորին երախտագիտություն հայտնեց գիտաժողովի կայացմանն էապես աջակցած ՀՀ Նախագահ Վ. Խաչատրյանին, ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանին, Շիրակի մարզպետ Ն. Բաղդասարյանին, Գյումրու քաղաքապետ Վ. Սամսոնյանին գիտության հանդեպ նրանց ցուցաբերած հոգատարության համար:

Ընդմիջումից հետո գիտաժողովի աշխատանքներն ընթացան 5 մասնաճյուղերում՝ Հնագիտության և վիճագրության մասնաճյուղ, պատմագիտության, ազգաբանության, 4-րդ՝ արվես-

տագիտության և ճարտարապետության, բանասիրության մասնաճյուղ:

Արդեն ուշ երեկո էր, երբ ավարտվեցին վերջին գեկուցումները: Առջևում ևս մեկ աշխատանքային օր կար՝ նույնքան հագեցած, նույնչափ հետաքրքիր: Գիտաժողովի երկրորդ օրը նիստերի ընթացքում լսվեց շուրջ 50 գեկուցում: 9-ը հնագիտության, 14-ը պատմագիտության, 7-ը բանագիտության և թանգարանագիտության, 10-ը բանասիրության գծով: Ունկնդիրների մեջ կրկին շատ էին ուսուցիչները և ուսանողները:

Երեկոյան լիագումար նիստում մասնաճյուղերի համանախագահների կողմից ներկայացվեցին և ամփոփվեցին գիտաժողովի արդյունքները: Իր եզրափակիչ խոսքում Շիրակի հայագիտական կենտրոնի տնօրենը գոհունակությամբ ու դրվատանքով ընդգծեց ներկայացված գեկուցումների մեծազույն մասի բարձր որակը, արդիականությունը, հայագիտությանը զբաղվելու լուրջ հավակնություններ ցուցաբերող երիտասարդների թվի նկատելի աճը, նման գիտաժողովների դերը նրանց գիտական հասունացման ճանապարհին:

Նիստի վերջնամասում տեղի ունեցավ համագործակցության երկու նոր հուշագրերի կնքման արարողություն: Շիրակի հայագիտական համագործակցության կենտրոնի և Դազախստանի հուշագիր վավերացրեց Ռ. Գ. Հարավային դաշնային համալսարանի սոցիոլոգիայի և տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտի հայագիտության կենտրոնի և Դազախստանի Գիտության կոմիտեի Ա. Հ. Մարգուլանի անվան հնագիտության ինստիտուտի ներկայացուցիչների հետ:

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՈՒՂՅԱՐԴ ՔԻՓԼԻՆԿ

ՍՏՐՈՒԿԸ, ՈՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՒ ԱՐՔԱ

Երեք բան է միշտ երկիրը ցնցում, և չորս բանի էլ մենք չենք դիմանա,- այսպես է գրել իմաստուն գրքում Սողոմոնը ինքը, և թող իմանա մեզմիջ ամեն մեկն այդ մասին ընդմիշտ, և ամեն մեկս թող հավետ հիշի, որ չորս Նզովքից ամենից վատթարն ստրուկն է՝ նստած գահին ուրիշի:

Անբարո կինն է թե ամուսնանում, գավակ է ծնուն՝ մեղքն է մոռացվում: Ամբիտո ուսումն է և քուն է մտնում, իսկ երբ քնած է, ծայրը չի լսվում: Թե աղախինն է դառնում տիրուհի, նրանից հեռու դու մնա կյանքում: Փրկություն չկա, սակայն, ստրուկից, որը մեր գլխին արքա է կարգվում:

Հիմար է՝ գործուն կառուցողական և կործանիչ է ամեն կառույցի: Հի լսում ձայնը բանականության. իր գործողոցն է վերջը գրույցի: Իշխում է միայն իշխելու համար, ուժով է ճնշում ոգին իմաստուն և իմաստուն է հռչակում նրան, ով որ քծնում է՝ «Միակ ճիշտն ես դու»:

Ստրուկ է եղել, ուրեմն՝ սովոր, որ դժբախտության պահին սու-

կալի իր գործած ամեն արարքի համար իր տերն է միայն պատասխան տալիս:

Ու երբ որ արդեն երկիրն ամենայն դժոխք է դարձնում վարքով տմարդի, մեղավորի է որոնում միայն, որ նրա վրա մեղքերը բարդի:

Միշտ այնպես հեշտ է խոստումներ տալիս, բայց խոսքն է շուտով նա տալիս քամուն:

Ահ կա իր սրտում՝ թե՛ բարեկամից, թե՛ մերձավորից, ինչպես թշնամուց: Համառ է ու բիրտ, երբ որ հարկ չկա, թույլ է, երբ հարկ է լինել անկուն: Ստրուկը, որը դառնում է արքա, հոգով ստրուկ է դարձյալ իր կյանքում:

ԴԻԼԸՆ ԹՈՒՄԱՍ (1914 - 1953)

*** Մի՛ գնա հեզ՝ դեպի գիշերն այդ բարի, Ծերությունն է բռնկվելու խավարում,- Միշտ մոլեգմիր, որ լույսն հանկարծ չմարի:

Թեկուզ գիտեն իմաստուններն աշխարհի, Որ մութն է ճիշտ, խոսքը կայծակ

չի վառում,- Չեն գնում հեզ՝ դեպի գիշերն այդ բարի:

Բարի մարդիկ միշտ հիշելով թախծալի՝ Ալիքի պես անցնող գործերն աշխարհում, Մոլեգմուն են, որ լույսն հանկարծ չմարի:

Եվ վայրենին, երբ արևը վիթխարի Սանձեց, ապա զգաց մորմոքն անմարում, Չի՛ գնում հեզ՝ դեպի գիշերն այդ բարի:

Երբ կույր մարդիկ՝ մռայլ գրկում խավարի, Մահվան շեմին լույսն զգացին արարուն, Մոլեգմեցին, որ լույսն հանկարծ չմարի:

Հայր, անիծիր տխուր բարձրից քո դարի Եվ օրհնիր ինձ՝ արցունքներով վարարուն: Մի՛ գնա հեզ՝ դեպի գիշերն այդ բարի, Միշտ մոլեգմիր, որ լույսն հանկարծ չմարի:

*** Եվ չի ունենա մահն իշխանություն: Կմիավորվեն մեռյալները մերկ՝ Քանու գրկի մեջ գտնվող մարդու և արևմուտքի լուսնկայի հետ: Երբ ոսկորները նրանց անմարմին

կղառման աճյուն, Աստղեր կշողան նրանց ոտքերին ու արմուկներին: Թեև խենթացած սակայն ողջամիտ կլինեն նրանք, Թեև ծովատույզ՝ բայց կելենն նորից ալիքներից վեր: Միահարմերը թեև կորուսյալ՝ չի կորչի սերը: Եվ չի ունենա մահն իշխանություն:

Եվ չի ունենա մահն իշխանություն: Ծովի փոթորկուն ալիքների տակ երկար մնալով՝ Չեն մեռնի նրանք անիմաստ մահով:

Գելարանների վրա տանջվելով, երբ մկանները տեղի են տալիս, Կամ անվիճելի փոկերով կապված՝ դեռ կմաքառեն: Հավատը երկու մասի կբեկվի նրանց ձեռքերում, Կպատուհասի չարը միեղջյուր ու կբզկտի, Եվ հիմնահատակ կլինեն նրանք, բայց չեն խորտակվի վերջնակա- նապես: Եվ չի ունենա մահն իշխանություն:

Եվ չի ունենա մահն իշխանություն: Ճայերն այլևս չեն ճչա նրանց ականցների մեջ, Ու չի փշովի ալիքն աղմուկով՝ ծովի ափերին: Եվ ուր ծաղիկն է ծաղկում, միգուցե էլ ոչ մի ծաղիկ

Չի հանի գլխիկն՝ անձրևի իջնող կաթիլին ընդդեմ: Թեկուզ խենթացած ու մեռած լինեն գամերի նման՝ Մարգարտածաղկի ցողունների հետ ձգվում են վեր: Դեպի արևն են ձգվում մեկընդ- միշտ, Մինչև կապառվեն բոցերն արևի, Եվ չի ունենա մահն իշխանություն:

ԴԵՅՎԻԴ ՀԵՐԲԵՐԹ ԼՈՐԵՆՍ (1885-1930)

ԻՆՔՐ ԹԵՉ ԽԴՃԱԼ

Չեն տեսել՝ վայրի բնության գրկում գեթ մի արարած խղճար ինքն իրեն: Անգամ թռչնակն է ցած ընկնում ճյուղից՝ սառած ու մեռած՝ առանց ինքն իրեն դույզն-ինչ խղճալու:

ԹՈՒՄԱՍ ՍԹԸՐՆԶ ԷԼԻՈԹ (1888-1965)

ՄՆԱՄԵՉ ՍԱՐԴԻԿ

Պարոն Քուրցը... մեռած... Ողորմացե՛ք ծերուկ Գային: | Սնանե՛ք մարդիկ ենք, Խրտվիլակներ ենք մենք, Որ միասին թեքվում, Ծղոտով լի գլխով խոնարհվում

ենք: Ավաղ: 2որ ձայները մեր հեզ, երբ շշուշոնով խոսում Ու փսփսում ենք միշտ, հանդարտ են, անիմաստ, Ինչպես քամին խոսում, որ չորացել է վաղ, Կամ թե առնետների քայլքն ապակու վրա, Որ փշրված է մեր նկուղում չոր:

Կերպարանք անձն, երանգ անգույն, Կաթվածահար ուժ, անընթացք շարժում:

Ովքեր անթարթ, անվախ, ուղիղ կտրել-անցել Ու մտել են մահվան Արքայությունն այն մի, Հիշեցե՛ք մեզ (թե կհիշեք իրոք) Ոչ թե որպես կորած, անգուսպ հոգիների, Այլ լոկ որպես մարդկանց սնամեջ ու թերի, Ծղոտով լցունված փուչ խրտվիլակների:

II

Վախենում են տեսնել երազներում աչքեր,

Եվ մահվան երազի արքայության մեջ այն, Դրանք չեն հայտնվում. Աչքերն այնտեղ այլ են, Կոտրված սյան վրա արևաշող փայլ են, Մի ծառ է օրորվում, ճոճվում այնտեղ, Եվ ձայները քամու երգերի մեջ Ավելի են հեռու, Հանդիսավոր, Քան թե աստղը մարող:

Թող չլինեն մոտիկ ես առավել Մահվան երազի մեջ, արքայության մեջ այն, Թող որ նաև կրեն Ձգույշ, շրջահայաց դիմակներ նուրբ, Առնետի վերարկու, ազոսի մորթ, Կամ խաչաձև փայտեր Մի դաշտի մեջ Եվ ինձ պահեն, ինչպես Հողմն է պահում իրեն, Ո՛չ ավելի մոտիկ... Բայց չլինի թող այդ վերջին հանդիպումը Այն արքայության մեջ մթնշաղի:

III

Սա մեռած երկիրն է,

Կակտուսի երկիր է, Քարե կուռքերն այստեղ Վեր են հառնում, առնում Մեռած մարդու ձեռքի պաղատանը Առկայծունի ներքո մարող աստղի:

Եվ այդպե՛ս է մահվան Արքայության մեջ այն՝ Արթնանալ մեն-մենակ, Հենց այն ժամին, Երբ սարսռում ենք ու քնքշությունից դողում: Շուրթերը, որ պիտի համբուրեին, Աղոթք են մրմնջում ջարդված քարին:

IV

Այստեղ չեն աչքերը, Այստեղ չկան աչքեր, Մահացող աստղերի Այս սնամեջ հովտում, Կորած արքայությանց փշրված երախում,

Մեր հանդիպումների վերջին վայրում Խարխափում ենք, փախչում, Խուսափում խոսքերից՝

Խմբված այս գետեզրին հղի գետի,

Տեսողությունից գուրկ, մինչ աչքերը Չեն հայտնվում նորից, Ինչպես հավերժական աստղը, Բազմաթերթիկ վարդը Մահվան մթնշաղի արքայության, Որը հույսն է միակ՝ Դատարկ մարդկանց:

V

Պարում ենք այստեղ՝ փշոտ տանձի շուրջ, Փշոտ տանձի շուրջ, կակտուսի շուրջ, Պարում ենք ահա փշոտ տանձի շուրջ Առավոտյան ժամը հինգին:

Գաղափարի միջև Եվ իրականության, Շարժման միջև Եվ գործողության Ընկնում է Ստվերը:

Ձի քո է Արքայություն

Ստահագունի Եվ արարման միջև,

Ձգացմունքի միջև Եվ իր պատասխանի Ընկնում է Ստվերը:

Կյանքը շատ երկար է

Տենչանքի և Ձղածգման միջև, Կարողության միջև Եվ գոյության, Էության և Անկման միջև Ընկնում է Ստվերը:

Ձի քո է Արքայություն

Ձի քո է... Կյանքն է... Ձի Քոնն է...

Այսպես է աշխարհն ահա վերջանում, Այս կերպ է աշխարհն ահա վերջանում, Ահա աշխարհն է այսպես է վերջանում, Ոչ թե պայթյունով, այլ կաղկան-ծոցով:

Անգլերենից թարգմանեց Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԸ



Նաիրա ԱՐԲՈՒՅԱՆ

«Եղիտ Պրինտ» հրատարակչությունը լույս է ընծայել Նաիրա Արախանյանի «Մամիկ» պատմվածքների ժողովածուն: Գիրքը հեղինակի առաջին ամփոփ ժողովածուն է, որում տեղ գտած պատմվածքներն ու ակնարկները ներկայացնում են հայկական գյուղի շունչն ու բույրը, բարքերն ու սովորույթները, օրն ու ցավերը, խնդիրները, հայ մարդուն՝ երբեմն առաջին հայացքից միամիտ, բայց խոր ու ազնիվ, հնարամիտ ու պատվախնդիր:

ԳԵՐԵԶՄԱՆՈՅԻ ՄՆԱՑԸ

Ուստա Մնացը գյուղի քարտաշն էր: Ազնիվ ու աշխատասեր մարդ էր: Աշխատում էր օր-նիբուն: Հողի ու անասունների հետ սեր չուներ: Իր գործն ու գրույցը քարի հետ էր, հասկացել ու կարողանում էր բնության եղ «ինքնահավան անտառներին» շողք ու շնորհքի բերել: Արվեստի գործեր չէր ստեղծածը, բայց գերեզմանաքարերի վրա օր օրի աճող գերեզմանաքարերը նրա մուրճի վայրիվերումների արդյունքն էին: Վարպետի մուրճը երկի հարյուր կամ հարյուր հիսուն տարեկան էր, ոչ մեկը նրա տարիքն այդպես էլ չիմացավ, բայց երկարակյացն անտրտում ու հլու ենթարկվում էր տիրոջ հրամաններին: Քարտաշ Մնացին գերեզմա-

նաքարերի համար պատվերներ տալու կարիք չկար: Համազրուղացիների մահվան բոթն առնելուն պես ափսոսանք էր ապրում, այն քաշում, իսկ թե մահացողի հետ մտերիմ էր եղել, այդ մասին որևէ դեպք ու դրվագ էր հիշում, ինքն իրեն մի քանի անգամ բարձրածայն պատմում, հետո գերեզմանատան մուտքի մոտ կառուցած իր հյուղակն էր մտնում, քարափոշու մեջ թաղված թախտի վրայից վերցնում մաշված ու խունացած նոթատետրը, թերթում նոր էջ, վերևում գրում հանգուցյալի անունը, ասենք՝ Մուրջյենց Կարապետ, Գափոյի Սեդրակ, Ափոյի աղջիկ Գույլխանը... ասպա՛ ամիս-ամսաթիվը ու ասեղից էլ բարակ ծայր ունեցող մատիտով զգուշությամբ գծում քարի եսքիզը, ընտրում քարը երիզող նախշերը, որոշում տապանաքարի պատկերը:

Ուստա Մնացը պինդ մարդ էր, քարհանքից հագիվ պոկված քարերից էլ պինդ:

Հերթը հասավ գյուղացի Մնաց Հովսեփյանի գերեզմանաքարը պատրաստելուն: Մնացը քարտաշ Մնացից մի քանի տարով էր մեծ: Ձախել տարիներին գյուղի գառնարածն էր եղել, հետո կոլխոզ էին տարել, կոմբայնի ղեկին նստեցրել, գյուղի հացահատիկը հավաքողն ու ամբարողը դարձրել: Մի անգամ կոմբայնը վերանորոգելիս Մնացը վնասում է մեջքը: Մի քանի ամիս գամվում է անկողնում, իսկ մի լուսնյակ ու քարվան կտրելու գիշեր հոգին հասցնում վաղամեռիկ նանիի գիրկը, ում վերջին օրերին անընդհատ հիշում էր ու հետը խոսում:

Այդ աշուն մահացողներ շատ եղան: Ուստա Մնացը չէր հասցնում գերեզմանաքարեր պատրաստել: Սկսեց գիշերները չքնել: Վարպետի մուրճի հավասարաչափ թխկթխկոցը սկսեց խախտել գիշերվա անդորարբեր լռությունը: Գիշերն իր խորքերից բերած սառնությունը խառնում էր վարպետի ծակատն ակոսող քրտինքի տաք կաթիլներին: Աշխատանքը վարպետին կյանք պարզևող միակ ուժն էր դարձել: Մեկեն Մնացը ձեռքի գործիքները վայր դրեց: Ուղղեց

հոգնաբեկ մեջքը՝ գրպաններից դատարկելով մանր քարերի կտորտանքը: Հայացքը երկնքին հառեց: Աստղերը շարվել էին երկնքի տուտին: Թվում էր՝ երկնքը մի փոքր շարժվի, աստղերը միանգամից ներքև կթափվեն: Գիշերվա խավարում ծղրիղների համերգն էր լսվում ծայրը խառնելով ձորի փեշերով հոսող մեծ առվի քչքչոցին: Չայնը Մնացին հաճելի թվաց, գլուխը շուռ տվեց ձորի կողմը: Չայնն ամենուր էր:

Հանկարծ աչքն ընկավ մթության մեջ կորած, բայց հագիվ նշմարվող իր տնակի կիսաբաց դռանը: Մի կատու բացված դռնից ներս ու դուրս էր անում: Տանտերն անմիջապես գլխի ընկավ. մածունը սեղանին է թողել: Քայլերն ուղղեց տնակի կողմը: Կատուն հեռացել էր: Թախտը կորել էր մածոնի մեջ: Դուռնը մածոնամանին հասցնելու համար հնարամիտ չորքոտանին թաթով խփել ու ամանը թախտին էր շուռ տվել: Մնացը մի լաթի կտորով սրբեց թախտը՝ մածոնի տակից դուրս բերելով իր անդավաճան նոթատետրը: Փորձեց մաքրել. գրածն ու գծածը անհետացել էին: Մեկեն տեղում քարացավ. նոթատետրը... Ախր լուսանցքները լիքն էին, լուսանցքներում հուշեր էին ապրում, լուսանցքներում կարոտ կար, այնտեղ մի ողջ գյուղ էր ապրում:

Գործը կիսատ մնաց: Մնացը բռնեց գյուղի ճամփան:

Կոմբայնավար Մնացը երկու որդի ուներ: Ավագը՝ Լևոնը, խելացի տղա էր, գերազանցությամբ էր դպրոցն ավարտել, կարդալ շատ էր սիրում: Նույնիսկ գյուղի գրադարանավարը լուսանկարը գրադարանի պատին էր խփել: Այդ փաստը հատկապես հորը շատ էր ուրախացրել: Այդ մասին հարևան գյուղի կոմբայնավարների պատմել էր երկի հագարումեկերորդ անգամ:

Գյուղում պատմում էին, որ Լևոնը բանաստեղծություններ է գրում, անգամ դրանցից մի քանիսը տպագրվել են քաղաքի եսիմ որ թերթում (այդպես էլ ոչ մեկը ոչ մի անգամ, նույնիսկ Լևոնը, տպագրված թերթի անունը չտվեց):

Լևոնը մի քառատող էր գրել ու տվել ուստա Մնացին, որ փորագրեր հոր գերեզմանաքարին՝ ի հիշատակ զավակների: Բայց այն Գոթատետրը, կատուն, մածունը...

Մնացը տուն հասավ: Տան փոքրիկ գրադարանում շարված գրքերը շուռումուռ տվեց, բանաստեղծությունների մի քանի գիրք բացեց՝ մտածելով, որ Լևոնի տված քառատողն այնտեղից կգտնի: Բայց գուր:

«Ալո՛, ալո՛, Լուսիկ քուր, դո՛ւ ես, Լևոնը տա՞նն ա: Լևոնին են ուզում,- իր խռատ ծայրով լսափողը դեռ ականջին չմոտեցրած սկսեց խոսել քարտաշ Մնացը: «Ալո՛, ալո՛,- լսվեց հակառակ կողմից,- ո՞ւմն եք ուզում, ո՞վ ա: Ալո՛, ալո՛...»

Լուսիկը կոմբայնավար Մնացի հագար տարվա պառապը (կնոջ մասին խոսելիս էսպես էր Մնացը դիմում), կոլխոզում աշխատելու ցրտաշունչ ձմեռներից մեկի ժամանակ մրսել էր, գրիպով ծանր հիվանդացել, ինչն էլ պատճառ էր դարձել խեղճ կնոջ խելքն ու հիշողությունը կորցնելու: Ամուսնու մահը կրկնապատկել էր հիվանդությունը: Ապրում էր, էլի, քանի Աստված չէր կտրել արևի լույսը:

Արտ ու դաշտում աշխատելու ժամանակ հարսներն ու թոռները հացն ու ջուրը կողքն էին դնում, դուռը վրան փակում ու գնում: Լուսիկը լսափողն ավելի մոտեցրեց ականջին՝ փորձելով որոշել խոսակցի ինքնությունը: «Ես եմ՝ Մնացն ա: Լևոնը տա՞նն ա, Լուսիկ քուր,- շարունակ նույն հարցն էր կրկնում Մնացը:

Լուսիկի ձեռքում մեկեն անշարժացավ խոսափողը՝ լսելով ամուսնու՝ Մնացի անունը: «Մնացը,- նվաղում ու հագիվ լսելի ձայնով հարցրեց Լուսիկը: «Դե հա՛, հա՛, գերեզմաններից Մնացը, Մը...»

Քարտաշը դեռ չէր ավարտել խոսքը, երբ պառապն իր սրտակտուր ու սրտակեղեք ծայրով սկսեց գոռալ. «Լևո՛ն, Արա՛մ, Սաթի՛կ, Աշխե՛ն... էկե՛ք, հասե՛ք, Մնացը... ձեր հե՛րը... գերեզմաններից Մնացը...»


Մնաց Հովսեփյանի քարի բացումն էր: Հարազատներն ու բարեկամները շուրջբոլորել էին տապանաքարը: Օրը արևոտ էր ու տաք: Իրար խառնված ծխի ու խնկի հոտը նստել էր ծաղիկների թերթիկներին: Լևոնն անդադար տապանաքարի վրա փորագրված քառատողն էր կարդում (համենայն դեպս, այդպես էր զգացվում), տղամարդիկ բաժակ էին բարձրացնում, հիշում արդար ու ազնիվ կյանքով ապրած իրենց համագյուղացուն, օրհնություն տալիս հոգում:

Հերթը քարտաշ Մնացին հասավ: Ձեռքի բաժակը մի կողմ դրեց, մոտեցավ թոռան թևը մտած տիկին Լուսիկին, համբուրեց ձեռքը՝ հավաքվածներին պատմելով իր ու Լուսիկի հեռախոսակցի գրույցը:

Մնացի տնեցիք իրար նայեցին՝ գլխի ընկնելով ողջ տարին անվերջ կրկնող Լուսիկ մայրիկի աղերսանքը:

«Այ բալա, դուք սիրտ չունե՞ք, գերեզմաններից ձեր հերն էր զանգել, գնացե՛ք, տեսե՛ք, ընչի՞ էր զանգել, հո բանի կարիք չունի՞»:

Նոթատետրի տխուր ճակատագրից հետո քարտաշ Մնացի թոռը պապի համար նոր տետր գնեց: Կաշվեպատ ու դեռևս կամակոր շապիկը թերթելով Մնացն իր կրպիտ ու կոշտացած մատների մեջ առավ մատիտը, դողացող ձեռքերով վերևում մշեց ամսաթիվը, իսկ կողքին «Մնաց աղն ու հացը, մեկ էլ՝ գերեզմանոցի Մնացը»:



ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՍԱՍՄԱ ՄՇԵՐ» ՎԻՊԵՐՈՒ ԼԵՉՎԻ ԱՌԱՋՆԱ-ԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



«Ժողովուրդը հավատում է իր ազգային լեգենդներին, միջերկրյա առասպելներին, էպոսին... Սասունցի Դավթի ջրաղացին, հոտին... Եվ դրանով է ուժեղ մի ժողովուրդը:»

Ավ. Իսահակյան

Եվ մեր մեծերի թողած ժառանգության հանդեպ հավատի մեջ է մեր ուժը: Նաև Ավ. Իսահակյանի, որի /և ընդհանրապես/ դիմանկարն ամբողջական չի լինի, եթե չարժևորվի նաև ավանդած գրականության լեզուն: Վարպետն այն գրողներից է, որոնք գրականություն և լեզու ստեղծում են հավասարապես: Նրա երկարատև ստեղծագործական կյանքի քննությունը և չափաժողով լեզվական առումով վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնելու, որ Իսահակյանի լեզուն չի ըն-

թացել մեկ նախանշված ուղիով, այլ անցել է զարգացման ուրույն ճանապարհ: Ասելիքով պայմանավորված՝ այն երբեմն ներկայացնում է ժամանակի գրական արևելահայերենի, ժողովրդախոսակցական լեզվի և մայրենի բարբառի հնուտ զուգորդություն, երբեմն՝ քսաներորդ դարի առաջին տասնամյակների հայ քնարերգության մակարդակը՝ նաև լեզվական առումով:

Իսահակյանի ընտրած արտահայտչամիջոցները, որքան էլ ինքնաբերական և ներքին ստեղծագործական մղումի արդյունք լինեին, ենթարկվում են, սակայն, նաև որոշակի նպատակադրության ու գիտակցական վերաբերմունքի՝ պայմանավորված լինելով գրվածքի թեմատիկ և ժանրային բնութագրերով: Վարպետի ստեղծագործության լեզվական առումով երկու շրջանին էլ, բնականաբար, բնորոշ են բարբառայնության և ոճավորման դեպքերը, սակայն դրանցից պետք է տարբերել ընդհանրապես նրա գեղարվեստական մտածողության մեջ առանձնահատկություն հանդիսացող «Սասնա Միերն վիպերգի» լեզուն: Այս հարցում Իսահակյանը հատուկ մոտեցում է ցուցաբերել՝ ձգտելով ստեղծել հայոց էպոսի բներանգը: Այս նպատակից ելնելով՝ նա ոչ թե Սասունի բարբառն է գործածել /որով Սասունի միջավայր կստեղծեր/, այլ գրական արևելահայերենի, Սասունի, Կարնո բարբառների լեզվատարների՝ հեղինակային զուգորդումներով յուրահատուկ լեզվարարակ: Ռ. Իշխանյանը վիպերգը համարում է «նմանողական բարբառայնությամբ» գրված չափաժողով մնուլ /Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, էջ 296/:

Չեղինակային նպատակադրման տեսակետից վիպերգի լեզվական որակը բարձր է: Կենտրոնում պահելով Սասունի բարբառի ընդհանուր հնչողությունը՝ Իսահակյանը, ըստ ասելիքի և թեմայի, վարպետությամբ համադրել է գրական արևելահայերենի լեզվատարները: Ահա. «Հոր նման պարթև, աչքերն ակնարկատն առքենի», կամ «Ավերեցին աշխարհը չար, Ու ռամկություն բերին աշխարհ, Ռամկի օրենք և իրավունք» /Ավ. Իսահակյան, Երկեր 6 հատորով, հ. 3, Երևան, 1974, էջեր 81, 108/ և այլն:

Վիպերգում զգալի գործածություն ունեն Իսահակյանի մայրենի բարբառի տարրերը՝ և՛ բառեր, և՛ քերականական ձևեր, և՛ ժողովրդախոսակցական բնորոշ արտահայտություններ, ինչպես՝ «Թե կտրեց տղան կապանքն երկաթին, Նա ազատ կուզե ու կրնա ձեռնել, Նա մեր ցեղեն է առյուծ հոր որդին» /80/, նաև «Կվազեր Միեր շանթի ետևեն, Փետուր կպոկեր արծվի թևեն» /81/: Բազմաթիվ են բացառական հոլովածին՝ բարբառին հատուկ /ե-ավոր/ կիրառությունները, նաև սահմանակամի համադրական ժամանակաձևերի գործածությունները /կվազեր, կպոկեր/:

Բարբառային ձևերի և բառաձևերի հնուտ գործածություններով պահպանված է ժողովրդական լեզվամտածողության միջավայրը, որը համոզիչ է ու բնական հերոսի գործունեության համար, ինչպես՝ «Կերթար ժուռ գուբար Սասնա դար-դուրան»/83/, «Իրար ետնուց եկան հասան Թե՛ գեղապետ, թե՛ խանութպան»/91/:

Սասունի լեզվական մթնոլորտի ապահովման տեսակետից շատ արժեքավոր են բարբառային և ժողովրդախոսակցական լեզվին խիստ բնորոշ բազմաբնույթ բարդությունների միատեղ կիրառությունները, օրինակ՝ «Հագածկապած վերտ ու վահան, Սուր ու աշտե, տեգ ու նիզակ, Իրեն առջևն առած-բերած Հոծ ժողո-

վուրդ -գեղ ու քաղաք, Գեղջուկ, մշակ, ճորտ ու ռամիկ, Հագածկապած գրահ-շապիկ, Գունդ ու մկունդ, պաս ու աղեղ, Գրոն տվին, Եկան մեկտեղ Դեն Միերին» /100/: Իսահակյանի բառագործածության վարպետությունն ակնբախ է:

Էպոսի լեզվի նմանողությամբ կերտված բազմաթիվ հատվածներում Իսահակյանը վիպերգի լեզվին հաղորդել է հարազատություն վիպերգությանը և ստեղծել Փոքր Միերի համար բնորոշ միջավայր ու հանգամանքներ, որոնց շնորհիվ կերպարը ցայտուն ու տարողունակ է դարձել, ինչպես՝ «Ելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա, Կռիվ խոյացավ ի Սարա վրա: Ու նրա ետուց խանդուկ մեծ տիկին Լիրլունն առավ, Լույս աշխարհ բերավ մեկ արու զավակ՝ տեր ու ժառանգին Ջոռաց արթոքին, Սասնա աշխարհին /80/, կամ «Ու կմտքի անմահ Միեր Աշխարհի բան, Աշխարհի բան, հանց որ իժ-օծ, կըխեթթե սիրտն ու հոգին»/105/:

Ա. Ղանալանյանը, անդրադառնալով «Սասնա Միերի» լեզվում տարբեր լեզվաոճերի վարպետ զուգորդումներին, եզրակացնում է, որ Իսահակյանը կարողացել է ստեղծել մի գեղեցիկ մոզակա, որը, չնայած գրական լեզվից կատարված շեղումներին, իր գեղարվեստական ամբողջության մեջ հասնում է ընթացողին և էնոցիոնալ մեծ ուժով վարակում նրան» /Ա. Ղանալանյան, Հայ գրականությունը և բանասիրությունը, Երևան, 1986, էջ 244/:

Հայտնի է, որ Իսահակյանի «Սասնա Միերը» մեր դյուցազնավեպի մշակումը չէ, այլ մի ինքնատիպ վիպերգ, որի հիմքում ընկած են դյուցազներգության չորրորդ ճյուղի տարբերակները և «մասնավորապես 1902թ. Բասեն գավառի Արմուտի գյուղում մշեցի գաղթական որմնադիր Փալաբեխ ուստա Մանուկից լսած անհայտ

մի տարբերակ՝ ըստ որի՝ Միերը դուրս պիտի գա իրեն բռնատեղից՝ Ազոավու մաղարայից, ու ռամկություն բերե աշխարհ, ռամիկ իրավունք»:

Վարպետը ձգտել է կերտել «վսեմ, մարգարեական, մեսիական կերպար» և մեր վեպը դարձնել «աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս»:

Իր ստեղծած հատուկ «բարբառայնության» դիրքերից Իսահակյանը կերտում է գեղարվեստական անմահ պատկերներ՝ գործածելով ժողովրդական մտածողությանը հատուկ պատկերավորման միջոցներ: Ահա Միերի զայրույթը ներկայացնող համեմատությունը. «Վես էր բնութքը, խրոխտ ու ըմբոստ. Հորով խանդով վառ, Ջայրույթի պահին մթար ու մլար, Հանց որ Նեմրուս սար» /84/, կամ «Ասավ Միեր Ու անառիկ բերդի նման Կանգնավ մնաց» /92/:

Այս պահերին համարժեք է փոխաբերությունը. «Միեր կեցավ անպատասխան, Անպատասխան լեռ անասախան» /101/:

Ահա խոսքի դիմամիզմի հրաշալի օրինակ՝ բնության կենսաթթվապատկեր. «Սասնա դար ու դուրան աղբյուր հագարան, Նման սուրացող սեգ առյուծներուն Բաշերն արծաթի՝ փռած քերծերուն»:

Այս աննախադեպ շարժուն պատկերին հակադրվում է մեկ այլ զարմանահարույց պատկեր՝ չափազանցության անգերազանցելի օրինակ. «Միերն էր վագեց, թիկունքը հզոր Քարին դեմ տվավ, քարը կանգ առավ, Ու մինչև էսօր Կրմնա կանգուն փարախի գլխուն» /84/:

Ճիշտ՝ Իսահակյանի թողած ժառանգության նման կանգուն...

Մարիետա ԽԱՉԱՏՐՅԱՆ Բան. գիտ. թեկն., դոցենտ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Advertisement for 'Aravmstahayereh Bannasteghoshoun' featuring contact information for 'SARITHE VARRANSEN' (387 Vaynatsy) and 'SARITHEHIN GELGELERSEN' (Mnrtal-Vannat), along with a list of services and a price table for various items like 'SARITHU VARRANSEN' and 'SARITHU REL HAZERSEN'.

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543